

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի մարտի 31-ից մինչև ապրիլի 7-ը, Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռում էին գտնվում Բեռլինի Հումբոլդի անվան համալսարանի աստվածաբանության դասախոս և Խաղաղության Քրիստոնեական Կոնֆերանսի փոխնախագահ դոկտ. Գերհարդ Բասարակը՝ իր տիկնոջ հետ, Ավետարանական Եկեղեցիների Ֆեդերացիայի նախագահության ատենապետ դոկտ. Քրիստոֆ Դեմկեն և Ավետարանական Եկեղեցիների Ֆեդերացիայի մամուլի բաժնի վարիչ, ԽՔԿ-ի աշխատանքները շարունակող կոմիտեի անդամ Ռոլֆ-Դիտեր Գյունտերը: Նրանք Մայր Աթոռ էին ժամանել Հայ Եկեղեցու կյանքին ծանոթանալու և վատկական տոները Սուրբ Էջմիածնում անցկացնելու համար:

Ապրիլի 1-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Ամենայն Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունեց Մայր Աթոռի հյուրերին և վրույց ունեցավ նրանց հետ: Զրույցի ընթացքում շոշափվեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք եկեղեցական հարցեր: Զրույցին ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը և Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին վարդապետ Ներսիսյանը:

Ապրիլի 2-ին, Ավագ շաբաթ օրը, երեկոյան ժամը 17-ին, գերմանացի հյուրերը Մայր տաճարում ներկա եղան Ճրագալույցի արարողությանը և Ս. Զատկի նախատոնակին:

Ապրիլի 3-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, Մայր տաճարում տեղի ունեցավ հայրապետական հանդիսավոր պատարագ Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ: Պատարագին ներկա գտնվեցին նաև Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչները:

Հավարտ ս. պատարագի Վեհարանի սեղանատանը, ի պատիվ մեծարգո հյուրերի, Ամենայն Հայոց Հայրապետը տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամները, մայրավանքի ղեկավար աշխատողներ և այլ պաշտոնական հյուրեր:

Ճաշկերույթին հրավիրված էր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ռուբեն Պարսամյանը:

Ճաշկերույթի ընթացքում Հայոց Հայրապետի և քույր Եկեղեցու ներկայացուցիչների

Գերմանացի հյուրերը Վեհարանում

միջև փոխանակվեցին ողջույնի և բարիգալըստյան ջերմ խոսքեր:

Ապրիլի 5-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 19-ին, Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի նախաձեռնությամբ, Մայր Աթոռի վանատան ընդունարանում տեղի ունեցավ էկումենիկ հանդիպում Հայ Եկեղեցու և Արևելյան Գերմանիայի Ավետարանական Եկեղեցիների ներկայացուցիչների միջև: Մայր Աթոռի կողմից հանդիպմանը մասնակցեցին Տ. Ներսես եպիսկոպոս Պոլատյանը, Տ. Ստեփանոս վարդապետ Չաքալյանը և Տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ կարծիքների փոխանակում Արևելյան Գերմանիայի Ավետարանական Եկեղեցիների և Հայ Եկեղեցու միջև հարաբերությունները առավել սերտացնելու և գործնական գետնի վրա դնելու վերաբերյալ մի շարք հարցերի շուրջ: Այդ ուղղությամբ կարևոր միջոցառում համարվեց առաջիկայում ուսանողների փոխանակումը: Հանդիպումն անցավ եղբայրական ջերմ և սրտագին մթնոլորտում:

Հանդիպման ավարտին քույր Եկեղեցու ներկայացուցիչները հրավեր ուղղեցին, որ Մայր Աթոռից ներկայացուցիչներ փոխայցելության գնան Բեռլին՝ մասնակցելու այս տարվա նոյեմբերին Մարտին Լութերի ծնընդյան 500-ամյակի առթիվ տեղի ունենալիք հոբելյանական հանդիսություններին:

Մայր Աթոռում գտնվելու օրերին գերմանացի հյուրերը այցելեցին Մայր Աթոռի թանգարանները, ծանոթացան մայրավանքի շրջափակում գտնվող կառույցներին, եղան Սարդարապատում, Սևանում, ուխտագնացության մեկնեցին Ս. Գեղարդ և Խորվիրապ վանքեր, Երևանում այցելեցին Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի, Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Ծիծեռնակաբերդում Հայ նահատակաց հուշարձան և այլ տեսարժան վայրեր:

Ապրիլի 7-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռի հյուրերը Վեհարանում հրաժեշտ տվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսին և գոհունակությամբ ու երախտագետ զգացումներով մեկնեցին Ս. Էջմիածնից՝ վերադառնալու իրենց երկիրը: